ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Խաղողի հումքով ոգելից խմիչքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ

Անհրաժեշտությունը - «Խաղողի հումքով ոգելից խմիչքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2008 թվականի հոկտեմբերի 6-ի «Խաղողի հումքով ոգելից խմիչքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» N 778-Ա որոշմամբ հաստատված ցանկի 10-րդ և 21-րդ կետերի կատարումն ապահովելու անհրաժեշտությամբ:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները – «Խաղողի հումքով ոգելից խմիչքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջով գինեգործական արտադրանք արտադրողները յուրաքանչյուր տարի պարտավոր են իրենց միջոցների հաշվին լիազոր մարմին ուղարկել իրենց արտադրած գինեգործական և դրա արտադրության մեջ օգտագործվող խաղողագործական արտադրանքի նմուշներ՝ իզոտոպային բաղադրության փորձաքննության համար: Սակայն, գինեգործական արտադրանք արտադրողների մեծ մասը խաղողի սեփական այգիներ չունեն, այսինքն՝ չեն հանդիսանում խաղողագործական արտադրանք արտադրող և հումքի ձեռքբերումը կազմակերպում են հիմնականում պայմանագրային հիմունքներով: Օրենքը չի սահմանում գինեգործական արտադրանք արտադրող չհանդիսացող խաղողագործական արտադրանք արտադրողների կողմից խաղողի նմուշների տրամադրման մասին դրույթ, ինչից ելնելով խաղողագործական և գինեգործական արտադրանքի իզոտոպային բաղադրության տվյալների ազգային բանկը խիստ թերի կլինի:

Միևնույն ժամանակ՝ օրենքով սահմանված չէ, թե խաղողագործական և գինեգործական արտադրանքների նմուշառման և նմուշների վերաբերյալ տեղեկատվության ապահովման գործառույթը որ մարմինն է իրականացնում:

Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը – Հայաստանի Հանրապետության կառավարությունը որդեգրել է արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականություն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 49 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությունը: Հաշվի առնելով, որ գինեգործական արտադրանքը Հայաստանից արտահանվող ապրանքների հիմնական տեսակներից է և ունի ծավալային աճի մեծ ներուժ, վերը նշված քաղաքականության շրջանակներում կոնյակագործությունն ու գինեգործությունը ընդգրկվել են ռազմավարության առաջնային ոլորտների շարքում, և ներկայումս Հայաստանի Հանրապետությունում իրականացվում են գինեգործական արտադրանքի, այդ թվում՝ հայկական կոնյակի վարկանիշի բարձրացմանն ուղղված մի շարք միջոցառումներ:

Կարգավորման նպատակը և բնույթը – Սույն օրենքի նախագծով առաջարկվում է սահմանել խաղողի նմուշների տրամադրման մասին դրույթ նաև խաղողագործական արտադրանք արտադրողների համար, ինչպես նաև նմուշառում իրականացնող լիազոր մարմին:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք – նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմի կողմից:

Ակնկալվող արդյունքը - Օրենքի նախագծի ընդունմամբ հնարավոր կլինի ամբողջական տեղեկատվություն ապահովել խաղողագործական և գինեգործական արտադրանքի իզոտոպային բաղադրության տվյալների ազգային բանկի ստեղծման և վարման համար, որի արդյունքում կապահովվի գինեգործական արտադրանքի՝ հումքի ծագման և աշխարհագրական նշման մասերով նույնականացումը: